ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան Երկու հազար տասնվեց թվականի ___

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանը (այսուհետ՝ մարզպետարան), ի դեմս մարզպետ Հարություն Վաչագանի Սարգսյանի, մի կողմից և ,Գեոթիմ' փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Զեռքբերող) ի դեմս տնօրեն Հայկ Ալոյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Օրենք՝ ,Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենք (27 նոյեմբերի 2006 թվականի, ՀՕ-185-Ն, ուժի մեջ է 2006 թվականի դեկտեմբերի 30-ից):

Արձանագրություն՝ Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված օտարվող սեփականության նկարագրության արձանագրություն:

Գույքային իրավունք ունեցող՝ Պայմանագրի կողմ չհանդիսացող երրորդ անձ, որը Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահին Տարածքում գտնվող հողամասի կամ հողամասի վրա գտվող անշարժ գույքի նկատմամբ ունի օրենքով սահմանված կարգով գրանցված ցանկացած գույքային իրավունք:

Պետություն՝ Հայաստանի Հանրապետություն:

Լիազոր մարմին՝ Վայոց Ձորի մարզպետարան:

Կողմեր՝ միասին հանդես եկող մարզպետարան և Զեռքբերող:

Որոշում՝ Պայմանագրի ստորագրումից հետո Ընդունվող՝ Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի իրականացումը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում:

Պայմանագիր՝ սույն պայմանագիրն իր բոլոր հավելվածներով:

Սեփականատեր՝ Պայմանագրի կողմ չհանդիսացող երրորդ անձ, որը Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահին Տարածքում գտնվող հողամասի կամ հողամասի վրա գտնվող անշարժ գույքի նկատմամբ ունի օրենքով սահմանված կարգով գրանցված սեփականության իրավունք:

Սեփականություն՝ Սեփականատիրոջը սեփականության իրավունքով պատկանող հողամաս կամ հողամասի վրա գտնվող անշարժ գույք:

Տարածք՝ Պայմանագրի հավելված 1-ում նկարագրված տարածք:

Ցանկ՝ ցանկ, որում պարունակվում է Տարածքում ֆինանսական աջակցություն ստացողների տվյալները, առկայության դեպքում չճշտված շինության գտնվելու վայրի տվյալները և ֆինանսական աջակցության չափը:

Ծրագիր՝Ամուլ սարի ոսկու հանքավայրի շահագործումը , ներառյալ համապատասխան ենթակառուցվածքների կառուցումը:

Քաղաքաշինական ծրագրի ընդհանուր ծավալներ՝ Քաղաքաշինական ծրագիր իրականացման գումարային գնահատական՝ հաշվարկված գույքահարկով հարկման նպատակով՝ օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքով:

Ծրագրի իրականացման վերջնաժամկետը՝ հունվարի 1, 2034-ը:

Ֆինանսական հատուցման չափը համաձայն Օրենքի՝ յուրաքանչյուր անձի համար

1 _____

2 _____

3 _____

4 _____

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Սույն պայմանագրով սահմանվում են Օրենքով սահմանված կարգով՝ Ծրագրի կենսագործման նպատակով Տարածքում Սեփականատերերից Սեփականության օտարման գործընթացի ընթացքում Կողմերի հարաբերությունները՝ իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲԸ

3.1. Լիազոր մարմինը պարտավոր է՝

ա) Որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող յոթ օրվա ընթացքում Օրենքով սահմանված կարգով այն Սեփականատերերին տրամադրումը.

բ) Որոշումը ,Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրումե հրապարակելուն հաջորդող յոթ օրվա ընթացքում ապահովել նաև այն ոչ պակաս, քան 3000 տպաքանակ ունեցող զանգվածային լրատվության միջոցում հրապարակելը.

գ) Որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող 15-օրյա ժամկետում համակարգել Որոշումից ծագող՝ Օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների գրանցումը ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում իրականացնելու ուղղությամբ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ քայլեր ձեռնարկելը.

դ) Որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող ____ ամսվա ընթացքում Արձանագրություն կազմելը՝ դրա կազմմանը մասնակից դարձնելով Ձեռքբերողի կողմից նշանակված ներկայացուցչին, իսկ Արձանագրության օրինակը Սեփականատիրոջն ուղարկելիս դրա պատճենը նաև Ձեռքբերողին ուղարկելը.

ե) Որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող _____ ամսվա ընթացքում Ցանկը կազմելը՝ դրա կազմմանը մասնակից դարձնելով Ձեռքբերողի կողմից նշանակված ներկայացուցչին.

զ) Ձեռքբերողի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պարտավորության կատարումն ապահովելու նպատակով՝ Պայմանագրի 3.1. կետի ,ա ենթակետի պահանջի իրականացման հետ կապված փոստային, ,բ ենթակետի պահանջի իրականացման հետ կապված հրապարակման և ,դ ենթակետի պահանջի իրականացման հետ կապված արձանագրությունը կազմելու, ինչպես նաև

Պայմանագրի 3.3. կետի իրականացման հետ կապված դատական ծախսերը հիմնավորող փաստաթղթերը ողջամիտ ժամկետներում Ձեռքբերողին ներկայացնելը:

3.2. Արձանագրությունը Լիազոր մարմնին կամ դատական կարգով բողոքարկվելու դեպքում, համապատասխան վարույթին որպես երրորդ անձ պետք է ներգրավվի նաև Ձեռքբերողը: Առանց Ձեռքբերողի համաձայնության Լիազոր մարմինն իրավունք չունի ընդունել հայցը կամ բողոք բերող անձի հետ կնքել հաշտության համաձայնություն:

3.3. Որոշումը դատական կարգով բողոքարկվելու դեպքում համապատասխան վարույթին որպես երրորդ անձ պետք է ներգրավվի նաև Ձեռքբերողը: Առանց Ձեռքբերողի համաձայնության Լիազոր մարմինն իրավունք չունի ընդունել հայցը կամ բողոք բերող անձի հետ կնքել հաշտության համաձայնություն:

3.4. Ձեռքբերողն ապահովում է Պայմանագրի 3.1. կետի ,զե ենթակետով սահմանված ծախսերի կատարումը հիմնավորող փաստաթղթերն իրեն ներկայացնելուն հաջորդող յոթ օրվա ընթացքում Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված իր պարտավորության կատարումը՝ Լիազոր մարմնին հատուցումը:

3.5 Օրենքով, որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված հասարակության և պետության կարիքների համար սեփականությունն օտարելու գործընթացի ընթացքում առաջացած ծասերը կատարվում են Ձեքբերողի միջոցների հաշվին:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ

4.1. Ձեռքբերողը պարտավոր է Օրենքով, Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետներում՝ սեփական միջոցներով ձեռք բերել Տարածքում գտնվող՝ Սեփականատերերին պատկանող հողամասերը ու դրանց վրա գտնվող անշարժ գույքը և կենսագործել Ծրագիրը: Սեփականության օտարման գործընթացի վերջնաժամկետ է սահմանվում 20__ թվականի _____-ը:

4.2. Եթե Սեփականության տարածքում գտնվում է Ցանկում նշված շինություն, ապա Ձեռքբերողն իրավունք ունի Ցանկում նշված անձի հետ կնքել ֆինանսական աջակցությունից հրաժարվելու և տարածքի ազատման պայմանագիր կամ ֆինանսական աջակցություն ստանալու և տարածքի ազատման պայմանագիր այդ մասին յոթնօրյա ժամկետում պատշաճ ձևով տեղեկացնելով լիազոր մարմնին: Նման պայմանագիր չկնքելու դեպքում Ձեռքբերողը պարտավոր է Ցանկում նշված ֆինանսական աջակցության գումարը համապատասխան անձանց անունով հանձնել նոտարի դեպոզիտ հաշիվ՝ այդ մասին եռօրյա ժամկետում պատշաճ ձևով տեղեկացնելով Լիազոր մարմնին, ինչպես նաև Ցանկում նշված անձանց Ցանկում նշված հասցեով: Ձեռքբերողը պարտավոր է մինչև Ծրագրի վերջնաժամկետը Ցանկում նշված բոլոր անձանց հետ կնքել տարածքի ազատման պայմանագրեր կամ ֆինանսական աջակցության գումարը հանձնել նոտարի դեպոզիտ հաշիվ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՈՇՄԱՆ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

5.1. Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով Որոշումն անվավեր ճանաչելու դեպքում Պայմանագիրը համարվում է անվավեր, իսկ Կողմերը ազատվում են միմյանց նկատմամբ Պայմանագրով սահմանված կամ Պայմանագրի հետ առնչվող բոլոր պարտավորություններից, այդ թվում վնասի հատուցման պարտավորություններից:

5.2. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով որևէ սեփականության մասով Որոշումն անվավեր ճանաչելու դեպքում Զեռքբերողը պարտավոր է այդ պահից սկսած եռամսյա ժամկետում սեփականատիրոջ հետ բանակցությունների միջոցով ձեռք բերել այն և շարունակել Պայմանագրի իրականացումը: Եթե Զեռքբերողին նշված ժամկետում չի հաջողվում ձեռք բերել այդ գույքը, ապա Լիազոր մարմինն իրավունք ունի դատական կարգով պահանջել Պայմանագրի վաղաժամկետ լուծում:

5.3. Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով Զեռքբերողի մասով Որոշումը կառավարության որոշմամբ կամ դատական կարգով անվավեր ճանաչելու դեպքում Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

6.1. Ծրագրի կամ դրա մի մասի իրականացման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Պայմանագրով սահմանված կարգով սեփականության իրավունք ստանալուց հետո Զեռքբերողն իրավունք ունի Լիազոր մարմնից պահանջել Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ակտերը:

6.2. Ծրագրի կամ դրա մասի իրականացման ընթացքում Զեռքբերողը պարտավոր է՝

ա) ապահովել ենթակառուցվածքների կառուցումը.

գ) կառուցապատման աշխատանքները Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

6.3. Ծրագրի կամ դրա մասի իրականացման ընթացքում Լիազոր մարմինը պարտավոր է՝

ա) Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ակտեր տրամադրելու վերաբերյալ պահանջ ներկայացվելու պարագայում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ապահովել համապատասխան ակտերի տրամադրումը Զեռքբերողին.

բ) Զեռքբերողի պահանջով, Զեռքբերողին տրամադրել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Տարածքի նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը:

7. ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

7.1. Որոշումը համարվում է ընդունված Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, եթե՝

7.1.1. Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում Որոշումն օրենսդրությամբ սահմանված կարգով չի բողոքարկվել.

7.1.2. Որոշումը բողոքարկվել է Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում և Որոշումն անվավեր ճանաչելու պահանջը մերժելու մասին դատական ակտն օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ուժի մեջ է մտել:

7.2. Ձեռքբերողը երաշխավորում է, որ՝

7.2.1. ունի Պայմանագիրը կնքելու համար անհրաժեշտ իրավասություն և լիազորություն.

7.2.2. Օրենքով, Որոշմամբ և Պայմանագրով նախատեսված պարտավորությունների իրականացման համար ունի համապատասխան կադրային ներուժ, ֆինանսական և տեխնիկական միջոցներ:

8. ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. Վիճաբեր մարմինն իրավունք ունի՝

8.1.1. Ձեռքբերողից պարբերաբար պահանջել ներկայացնել տեղեկատվություն պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքի մասին:

8.2. Վիճաբեր մարմինը պարտավոր է

8.2.1. Ձեռքբերողին տրամադրել Պայմանագրին ու Որոշմանն առնչվող իրեն հայտնի և էական նշանակություն ունեցող տեղեկությունները:

8.3. Ձեռքբերողը պարտավոր է՝

8.3.1. չխրախրել սեփականության օտարման ընթացքում իրեն հայտնի դարձած Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ գաղտնիք հանդիսացող տեղեկությունները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Կողմը պարտավոր է հատուցել Օրենքի, Որոշման կամ Պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում, ինչպես նաև անուղղակի երաշխավորության արդյունքում այլ Կողմին պատճառված վնասները:

10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

10.1. Կողմերն ազատվում են Պայմանագրով պարտավորությունները մասամբ կամ ամբողջովին չկատարելու համար պատասխանատվությունից, եթե այդ չկատարումն անհաղթահարելի ուժի հանգամանքների, այսինքն հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, պետական մարմինների կողմից ընդունված ակտերի, ապստամբությունների, պատերազմների, ռազմական գործողությունների, և այլնի հետևանք է հանդիսացել, եթե այդ հանգամանքները Պայմանագրի կնքման պահին անկանխատեսելի բնույթ էին կրում, ի հայտ են եկել Պայմանագրի կնքման ամսաթվից հետո են և անմիջականորեն ազդել են դրա կատարման վրա:

10.2. Անհաղթահարելի ուժի հանգամանքների ի հայտ գալու դեպքում, Կողմերի պարտավորությունների կատարման ժամկետները հետաձգվում են այդ հանգամանքների և դրանց հետևանքների գործողության ժամանակին համաչափ:

Կողմը, որի համար վերոհիշյալ պատճառներով Պայմանագրով պարտավորությունների կատարումն անհնարին է դարձել, պարտավոր է գրավոր տեղեկացնել մյուս Կողմին նման հանգամանքների ի հայտ գալու կամ վերանալու մասին 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Ֆորս-մաժորային իրադրությանը պետք է սահմանված կարգով և ժամկետներում հաստատված լինի Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատի կողմից տրված փաստաթղթերով:

10.3. Եթե անհաղթահարելի ուժի գործողությունը շարունակվում է 2 (երկու) ամսվա ընթացքում, Կողմերը պետք է լուծեն Պայմանագրով պարտավորությունների հետագա կատարման հնարավորության կամ Պայմանագրի լուծման հարցը, ինչի մասին Կողմերը ստորագրում են առանձին լրացուցիչ համաձայնագիր:

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել Կողմերից մեկի կողմից Պայմանագրով կամ Օրենքով նախատեսված այն դեպքերում, որոնք չեն պահանջում լուծման պարտադիր դատական կարգ: Նման դեպքերում Կողմը պարտավոր է պատշաճ տեղեկացնել մյուս Կողմին Պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծման մասին՝ կցելով համապատասխան հիմքերն ու հիմնավորումները:

11.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել դատական կարգով Ձեռքբերողի կողմից, եթե Լիազոր մարմինը չի կատարում կամ պատշաճ չի կատարում Պայմանագրով նախատեսված պարտականությունները կամ տվել է սխալ երաշխիքներ, և այդ խախտումը ակնհայտ վկայում է, որ դրա արդյունքում Ձեռքբերողը չի կարողանա ողջամիտ ժամկետում կամ պայմաններով իրացնել Պայմանագրով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները:

11.3. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել դատական կարգով Լիազոր մարմնի նախաձեռնությամբ, եթե Ձեռքբերողը չի կատարում կամ պատշաճ չի կատարում պայմանագրով նախատեսված պարտականությունները կամ տվել է սխալ երաշխիքներ, և այդ խախտումը ակնհայտ վկայում է, որ դրա արդյունքում Ձեռքբերողը չի կարողանա ողջամիտ ժամկետում կամ պայմաններով իրացնել Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտավորությունները:

11.4. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում մեղավոր Կողմը պարտավոր է հատուցել Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքով մյուս Կողմին, ինչպես նաև երրորդ անձանց պատճառված վնասները:

11.5. Պայմանագրի պայմանների (բացառությամբ Կողմի գտնվելու հասցեի) փոփոխությունները, լրացումներն ու ուղղումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որը ձևակերպվում է լրացուցիչ համաձայնագրով, որը ուժի մեջ է մտնում Որոշման մեջ համապատասխան փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո: Կողմի գտնվելու հասցեում փոփոխություններ, լրացումներ և

ուղղումները համարվում են կատարված մյուս Կողմերին պատշաճ ծանուցելու պահից:

11.6. Պայմանագիրը կնքվում է 4 (չորս) իրավահավասար օրինակից, մեկ օրինակ պահվում է Հայաստանի Հանրապետության կառավարությունում, մեկ օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետարանում, և մեկական օրինակով պահվում է Կողմերի մոտ:

11.7. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

11.8. Պայմանագրի գործողությանը դադարում է, եթե Պայմանագրի ստորագրման պահից հետո եռամսյա ժամկետում Որոշումը չի ընդունվում: Այդ դեպքում Կողմերն ազատվում են միմյանց նկատմամբ Պայմանագրով սահմանված կամ Պայմանագրի հետ առնչվող բոլոր պարտավորություններից, այդ թվում վնասի հատուցման պարտավորություններից:

11.9. Պայմանագրի գործողությունը դադարում է Ծրագրի ավարտի պահից, ինչի մասին Լիազոր մարմինը և Ձեռքբերողը կազմում են արձանագրություն: Այդ դեպքում Պայմանագրի ավարտն ինքնին Կողմերին չի ազատում մինչ արձանագրության կազմելը ներկայացված վնասի հատուցման պահանջներից:

11.10. Պայմանագրի որևէ մասի անվավերությունը չի հանգեցնում Պայմանագրի այլ մասերի անվավերության:

12. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՏԱՐՐԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի անունից՝ մարզպետ Հարություն Մարգսյան	,ԳԵՈԹԻՄ" փակ բաժնետիրական ընկերության անունից՝ տնօրեն Հայկ Ալոյան